

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



ՀԱՅԱՑՔ ՍՅՈՒՆԻՔԻՑ. Ռուսաստանի և Իրանի հետ ռազմաքաղաքական համագործակցությունն այլընտրանք չունի մեր ընթացքի ներկա հանգրվանում

2024 թ. մարտի 6-13-ը «Սյունյաց երկիրը» Սյունիքի մարզում անցկացրեց հարցախոյզ՝ «Շարունակե՞նք հայ-ռուսական բազմադարյա բարեկամությունն ու համագործակցությունը, թե՞ տարանջատվենք Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական ու տնտեսական համագործակցությունից՝ նախապատվությունը տալով հավաքական Արևմուտքին ու Նրա տարածաշրջանային ներկայացուցիչ Թուրքիային»:

Յանը կամ առաջարկությանը ծանոթացել է 50 590 մարդ (միայն մեր էլեկտրոնային հարթակներում):
Նույն հարթակներում նախաձեռնությանը հավանություն է տվել 295 հոգի:
Այդ հարթակներում մասնակիցները գրանել են 326 մեկնաբանություն:
Երեսուկուսի հոգի զանգահարել է խմբագրություն՝ ներկայացնելով տեսակետ:
Հիսուն հոգի նկատառում է հայտնել էլեկտրոնային փոստով:

Ի՞նչ իրողություններ ի հայտ եկան հարցախոյզի ընթացքում, ի՞նչ նկատառումներ հայտնեցին մասնակիցները. այդ ամենը խմբավորել և ներկայացնում ենք ստորև:
Առաջին՝ ակնհայտ արդյունքն այն է, որ ինչո՞ր առարկայի վերաբերյալ հանրության մի ստվար հատվածի մեջ առկա է անտարբերություն:
Երկրորդ՝ առաջարկված հարցախոյզը (այնուամենայնիվ) վերածվեց թեմայի շուրջ ակտիվ բանավեճի: Ընդ որում՝ բանավեճն ու կարծիքների բախումն ավելի ակտիվ էին ու բազմաբևեռ, քան ենթադրում էինք ի սկզբանե:
Երրորդ. հարցախոյզ անցկացնելու մեր նախաձեռնությունը չափազանց ջղայնաբար ընդունեցին որոշ մարդիկ: Ընդ որում՝ ջղածությունն տեսարաններ էին ցուցադրում ոչ թե սյունեցիները, այլ հանրապետության տարբեր վայրերում բնակվող և Սյունիքի հետ առնչություն չունեցող մարդիկ:
Շարունակությունը՝ էջ 3

Հայաստան-Իրան սահմանը՝ շնչափող երկու երկրների համար. հարցազրույց Իրանի խորհրդարանի նորընտիր հայազգի պատգամավորի հետ

Մարտի 1-ին Իրանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում Սպահանի և հարավային իրանահայության ընտրամասում հաղթեց Գեղարդ Մանսուրյանը՝ ձեռք բերելով քվեների 78 տոկոսը: Մանսուրյանը քաղաքագետ է, միջազգային հարաբերությունների փորձագետ: Հեղինակն է «Հայաստանը և հարակից անվտանգության խնդիրները» գրքի: Բազմաթիվ քաղաքական վերլուծական հոդվածներ է հրատարակել՝ Կովկասի, Հայաստանի ու Արցախի մասին: Առաջիկա շաբաթներին պաշտպանելու է դոկտորական ատենախոսությունը՝ «Սյունիքի ապահովության դերակատարությունը տարածաշրջանի անվտանգության հարցում» թեմայով: Yerkir.am-ը գրուցել է նորընտիր պատգամավորի հետ:

Շնորհավորում են Ձեզ՝ մաղթելով հաջողություններ Ձեր պատասխանատու գործում: Տարիներ շարունակ ակտիվ գործունեություն են ծավալել համայնքային կյանքում: Անդամակցել եք թեմի Պատգամավորական ժողովի 15, 16 և 17-րդ նստաշրջաններին: Առաջիկա 4 տարվա համար պատգամավորի պարտականություններ եք ստանձնելու Իրանի Իսլ. խորհրդարանում: Ի՞նչ նպատակներ եք հետապնդում: Որո՞նք են այն առանցքային հարցերը, որոնց ուղղությամբ ուզում եք աշխատել ու բարձրանալ խորհրդարանում:
– Առաջին հերթին շնորհակալություն պետք է հայտնեմ իրանահայությանը, մասնավորապես՝ Սպահանի հայ համայնքին ու հարավային իրանահայությանը, որ բարձր գիտակցությամբ՝ 80 տոկոսով մասնակցություն ցուցաբերեցին ու փաստեցին, որ կարողում են պատգամավորի դերը թե՛ իրենց



կյանքում և թե՛ Իրանի պետական-քաղաքական կյանքում: Շնորհակալ են բոլոր նրանց, ովքեր իրենց քվեն ինձ վստահելով՝ հանձնեցին ինձ մեծ պատասխանատվություն՝ պաշտպանելու հայության համայնքային շահերը, ինչպես նաև աշխատելու Հայաստան-Իրան հարաբերությունների զարգացման ուղղությամբ:
Շարունակությունը՝ էջ 2

Տկարն է ձգտում հաճոյանալ ամբոխին, արժանանալ փողոցի ուշադրությանը: Ասպե՛տ եղիր նախ անձիդ նկատմամբ:

Գարեգին Նժդեհ

Կալինինգրայան Էբսկլավի օրինակը «Չանգեզուրյան» միջանցքի համար

Թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից, այսպես կոչված, «Չանգեզուրի միջանցք» ստանալու, Սյունիքն օղակելու և գրավելու, ՀՀ-ն տրոհելու ուղղությամբ իրականացվող ագրեսիվ հայտարարությունների ու քայլերի պայմաններում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել «Ազգ» պարբերականում 2024 թ. հունվարին տպագրված հոդվածը:

Ռուսաստանի համար Էբսկլավային կարգավիճակ ունեցող Կալինինգրադի նմանությամբ «Չանգեզուրյան» միջանցք բացելու տարբերակի մասին Ադրբեջանի նախագահի արտաքին քաղաքականության գծով օգնական Հիլմետ Քաջիևի ներկայացրած առաջարկի անկատար լինելն ապացուցելու համար տեսակետ է հայտնել իրանցի վերլուծաբան, դոկտոր Ահմադ Քազեմին և այն համարել Բաքվի ու Երևանի միջև ձեռք բերված զաղտնի պայմանավորվածության արդյունք: Նա համոզվում է հայտել, որ միջանցքի նմանօրինակ տարբերակը ծուղակ է Հայաստանի համար:

Ելույթ ունենալով «Հայ-ադրբեջանական հակամարտություն» խորագրով Թեհրանի համալսարանում անցկացված գիտական նստաշրջանում, Իրանի իսլամական ազատ համալսարանի միջազգային իրավունքի ավագ փորձագետ, դոկտոր Քազեմին նշել է, որ գերմանական Berliner Zeitung թերթին տված հարցազրույցի ժամանակ Հիլմետ Քաջիևի ներկայացրած տարբերակն առաջարկվել է այնպիսի պայմաններում, երբ Ռուսաստանի ու Լիտվայի միջև առկա տարածաշրջանային պատճառով, Լիտվայի տարածքով ռուսական զնացների՝ առանց ստուգումների փոխադրումը դեպի Կալինինգրադ, որը նույնիսկ իրականացվում էր մաքսային ձևակերպումներով ու համապատասխան մաքսավճարներով, ձախողվել է:

Նա հավելել է՝ Լիտվան ՆԱՏՕ-ի ու Եվրամիության անդամ է, և հատկապես ուկրաինական պատերազմից ու Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներից հետո ոչ միայն սկսել է ռուսական երկաթուղային փոխադրումների նկատմամբ իրականացնել լիարժեք վերահսկողություն, այլ նաև թույլ չի տալիս Ռուսաստանին իր օդային տարածքով թռիչքներ իրականացնել դեպի Կալինինգրադ:

Դոկտոր Քազեմիի խոսքերով Կալինինգրադի հետ հարողորակվելու համար ներկայումս Ռուսաստանը ոչ միայն օգտագործում է Ռուս-Լուգանի նավահանգստի երկարուձիգ ճանապարհը, այլ նաև նախատեսում է օգտվել Բելառուսի ու Լեհաստանի երկաթուղային ցանցի հնարավորություններից: Քազեմիի կարծիքով՝ Կալինինգրադի ձախողված նախագիծը, իբրև միջազգայնորեն ընդունված գործելակերպ ներկայացնելու Բաքվի ջանքերը, բացահայտում են խաբեությանը և ամեն գնով նպատակին հասնելու Ադրբեջանի մտադրությունները, որոնք միջազգային իրավունքի տեսակետից մերժելի են:

Բանախոսն իր ելույթում մանրամասն անդրադարձել է Ադրբեջանը նախիջևևսին կապող իրանական կողմի առաջարկած շահեկան նախագիծին, որն ստացել է «Արաբսի միջանցք» անվանումը, համաձայն որի նախատեսվում է կառուցել Իրանի տարածքով Ադրբեջանից Տուվա կամ Արևելքից Արևմուտք ձգվող նոր մայրուղի:

Նա կասկածներ չունի, որ «Չանգեզուրյան» միջանցքը Հարավային Կովկասում «անգործառնական» կարգեր հաստատելու ուղղությամբ՝ մի կողմից Լոնդոնի ու Թեյ Ալիվի, և մյուս

Շարունակությունը՝ էջ 5

ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ. «Կայուն զարգացումը ԶՊՄԿ-ի օրակարգի անբաժանելի և կարևոր բաղկացուցիչն է»

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը կայուն զարգացումը համարում է իր օրակարգի անբաժանելի և կարևոր բաղկացուցիչ՝ իր ամենօրյա աշխատանքի մասը համարելով նաև թափանցիկ աշխատելու:

Մարտի 6-ին Երևանում անցկացվեց «Կայուն զարգացում և ESG. միջազգային օրակարգ, տեղական կարիքներ» խորագրով կոնֆերանսը: Կոնֆերանսը մեկ հարթակում էր հավաքել հայաստանյան տարբեր ընկերությունների՝ բնարկելու առկա խնդիրներն ու ձեռքբերումները:

Կարևորելով թափանցիկությունը՝ ԶՊՄԿ-ն առաջիններից է, որ արդեն 2 տարի անընդմեջ հրապարակում է կայուն զարգացման վերաբերյալ զեկույց:



«Այդ զեկույցում շատ բարձր մակարդակով և համարձակ խոսում ենք թե ձեռքբերումների, թե բացթողումների մասին: Նաև այդ հաշվետվության շատ կարևոր բաղկացուցիչ մաս է պլանների մասին խոսելը: Հարող տարի մենք արդեն հաշվետվություն ենք

տալու, թե ինչ է արվել», – ասաց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը: Կայուն զարգացման համատեքստում կոմբինատի ձեռքբերումները շատ են, սակայն ընկերության ներկայացուցիչն առանձնացրեց մի քանիսը: Առաջնադասում կան կոմբինատի բնապահպանական կառավարման մեջ, թեև համարում են, որ կարող են ավելին ու այդ ուղղությամբ ջանքեր են գործադրում:

«Փոշու կառավարման մեջ ամբողջությամբ արդիականացվում է մոնիթորինգի սարքավորումը, վերաիմաստավորվում է մոնիթորինգային համակարգը՝ նոր ժամանակակից սարքավորումներով, որոնց կիրառմամբ մենք միայն կարող ենք հպարտանալ», – ասաց Ստեփանյանը:

Ձեռքբերումներ են գրանցվել կոմբինատում նաև աշխատանքային անվտանգության առումով, մշակութային փոփոխությունները դանդաղ, բայց կայուն տեմպերով գնում են առաջ:

«Կայուն զարգացումն անկայուն միջավայրի պայմաններում» պատկերացումն ընթացքում բնարկվեցին տարածաշրջանային անվտանգային խնդիրների, վերջին տարիների մարտահրավերների պայմաններում ընկերությունների աշխատանքում առաջացած ռիսկայնություններն ու տրված լուծումները: Կորոնավիրուսից մինչև պատերազմ, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանության հետևանքով առաջացած մարտահրավերներ. այս ամենից անմասն չեն մնացել



տարբեր ոլորտների ընկերությունները, այդ թվում՝ երկրի թիվ 1 հարկատուն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, խնդիրները, սակայն, հարթահարվել են:

«Ամենավերջին ցնցումը, որ շատ էմոցիոնալ էր, տեղահանման գործընթացն էր սեպտեմբերին, որ հենց մեր մարզով անցավ: ԶՊՄԿ-ն չէր կարող այդտեղ իր դերակատարությունը չունենալ. թե աշխատանքի անհրաժեշտությունը, թե էնոցիոնալ... ինչքան էլ պատրաստ ես, իմունիտետ ես ձեռք բերում, սակայն այդ օրերին հուզական մեծ ցնցումներ ես ապրում: Երևի այդքանն էր հիմա: Դրանից բիզնեսը միայն ուժեղանում է, որովհետև ցանկացած մարտահրավեր նոր հնարավորություններ է ստեղծում, ցանկացած մարտահրավեր ցույց է տալիս, թե որտեղ են բացերը: Եվ կազմակերպություն, որ ունի ճիշտ կառավարման համակարգ, միանգամից ուշադրություն է դարձնում այդ բացերին, կենտրոնն ու շատ արագ իր կառավարման մեթոդներով ու գործիքներով սկսում է հարթահարել», – ասաց Ստեփանյանը:

Պատելի շրջանակում բնարկվեց նաև միջազգային փորձը, ընդգծվեց հանքարդյունա-

բերության ոլորտի ու բնապահպանների միջև երկխոսության կարևորությունը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրենը նման բնարկումները շատ կարևոր հարթակ է համարում՝ լսարանին ուղերձները տեղ հասցնելու, ոլորտի խնդիրներից ու ձեռքբերումներից խոսելու և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ առկա կարծրատիպերը կտրտելու համար: Կոմբինատն իր ամենօրյա աշխատանքի մի մասն է համարում թափանցիկ աշխատելու, իր գործունեության մասին հրապարակային խոսելը: Նկատել են՝ ոլորտը ամենաթիրախավորվածներից է, այսպիսով կարևորում են համայնքի, ժողովրդի հետ բաց ու թափանցիկ խոսելը: Հաղորդակցության տարբեր գործիքների կիրառումը միտված է հանրության շրջանում վստահության վերականգնմանն ու ամրապնդմանը: Ընկերությունում շատ են կարևորում նաև բնապահպանների հետ կառուցողական երկխոսությունը՝ ուշադրություն հրավիրելով իրական խնդիրների, այլ ոչ մտացածին վախերի վրա:

6 ՄԱՐՏԻ 2024 Թ.



Ջրային պաշարներն արդյունավետ օգտագործելու մտահոգությամբ

ԱՄ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ մեկնարկել է «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագիրը: Այն իրականացվում է «Դեյոթթ Քեսալթինգ» ընկերության կողմից:

Ծրագիրը ներառում է նաև Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թթ. կառավարման պլանը: Դրա վերանայման և թարմացման աշխատանքների շրջանակում մարտի 1-ին Սյունիքի մարզպետարանում անցկացվեց Հարավային ջրավազանային կառավարման պլանի ներկայացում և բնարկում, որին մասնակցում էին 33 շրջակա միջավայրի նախարարության աշխատակիցներ, ծրագրի փորձագետներ, Հարավային ջրավազանային կառավարման տարածքային բաժնի թիմը՝ բաժնի պետ Արամ Գրիգորյանի գլխավորությամբ, Սյունիքի համայնքների ներկայացուցիչներ:

Չեկուցումները, մասնավորապես, վերաբերում էին հարավային ջրավազանային ռեսուրսների վրա Եական ճնշումներին և ազդեցություններին (որակական և քանակական առումներով) և միտված են ոռոգման ու խմելու ջրի մատակարարման բարելավմանը:

Չեկուցումներին հետո ներկայացվեցին հարցեր էին ուղղում ելույթ ունեցողներին, որից պարզ դարձավ, որ այդ ոլորտում տակավին



խնդիրներ կան լուծելի: Ինչպես բնարկման ավարտից հետո «Սյունյաց երկրին» փոխանցեց «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագիր առաջին բաղադրիչի ղեկավար Արամ Կարապետյանը, ծրագիրը մեկնարկել է 2022թ. հուլիսից՝ հինգ տարով: Այսօրվա միջոցառումը երկրորդ աշխատանքային բնարկումն է, նախատեսվում է Սյունիքի մարզում ևս երկու նման բնարկում անցկացնել: **ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ**



Մեղրիի սահմանային անցակետի շինաշխատանքներն ընթանում են բնականոն հունով

Պետական եկամուտների կոմիտեում տեղի է ունեցել աշխատանքային բնարկում Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման և արդիականացման ծրագրի ընթացիկ աշխատանքների վերաբերյալ կապալառու ընկերության՝ «Թա-Նա Էնթերշի Մենեջմենթ» տնօրեն Բեհգադ Եսլախչիի հետ:

Կոմիտեի ներկայացուցիչները ընդգծել են նախագծի կարևորությունն ու տեխնիկական հարցերում երկկողմանի գործակցության անհրաժեշտությունը:

Կարևորելով ծրագրի ընթացիկ հարցերի վերաբերյալ կոմիտեի հետևողականությունն ու աջակցությունը՝ շինարարական ընկերության ներկայացուցիչները լսել են, որ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով: Տեղեկությունը հայտնում է ՊԵԿ մամուլի ծառայությունը:

Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցման և արդիականացման շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին և կավարտվեն 2026 թվականին, որի շրոտիվ անցակետը կհամապատասխանի միջազգային չափանիշներին:

Մեղրիի սահմանային անցակետի գործառնությունները լիարժեք ապահովելու նպատակով

պայմանագրով նախատեսվում է կառուցել 4000 քմ կառուցապատման մակերեսով երկհարկանի վարչական շենք՝ տանիքում 1500 քմ արևային էներգակայանով: Անցակետը կունենա մուտքի և ելքի ուղղությամբ՝ տրանսպորտային միջոցների մանրամասն գնման, բեռնատար տրանսպորտային միջոցների ռենտգեն գնման և մաքսային ձևակերպումների մասնաշենքեր, ինչպես նաև մարդատար տրանսպորտային միջոցների ռենտգեն գնման հարթակ, անասնաբուժական, սանիտարական և բուսասանիտարական հսկման կայան ու այլ ենթակառուցվածքներ: Մուտքի և ելքի ուղղությամբ՝ յուրաքանչյուրում նախատեսվում է ունենալ 5 ուղեգին: Մեղրիի արդիականացված անցակետը հազեցված է լինելու նաև գերծամանակակից տարբեր սարքավորումներով, մասնավորապես, մարդատար տրանսպորտային միջոցների, ձեռքի ուղեբեռի և փոքրածավալ բեռների գնման, մարդկանց սքանավորման համար նախատեսված ռենտգենաճառագայթային, ինչպես նաև լաբորատոր սարքավորումներով, ՍԻԲ ռադիոկայաններով, տվյալների մշակման կենտրոնով, փաստաթղթերի իսկությունը ստուգող սարքերով և այլն:

13 ՄԱՐՏԻ 2024 Թ.

«Եթե չանցնենք լուրջ քայլերի, Արցախում կկորցնենք այն ամենը, ինչ հայկական ու քրիստոնեական է»։ Արցախի թեմի առաջնորդ

Արքեպիսկոպոս Առաքել Բաղդասարյանը պատմամշակութային հուշակոթողները: Օրերս ծանր տեխնիկայով ԱԺ շենքն էին քանդում, և այդ գործընթացը դեռավ առ դեռ աղբյուր է հանդիսանում լրատվամիջոցները նկարահանում ու տարածում էին համացանցում: Զուգահեռաբար քանդում են հայկական գերեզմանոցներն ու տեղը ճանապարհ կառուցում: Մտնում են եկեղեցիներ, քանդում դրանք ու վնասում, կատարվածը նկարահանում ու հետո, ինչպես մյուս դեպքերում, վանդալիզմը նկարահանում ու տարածում են համացանցում:



տեքստում հիշեցրեց՝ մշտապես ահազանգել են, որ Արքեպիսկոպոսը որևէ բանի առաջ կանգ չի առնելու՝ օկուպացված Արցախում ոչնչացնելու հայկական հետքը:

«Արքեպիսկոպոսն ունի հեռահար ծրագրեր ու նպատակներ՝ անել այն ամենը, ինչը արել էին Նախկինում Արցախում, երբ կրկին Արցախն իրենց օկուպացիայի տակ էր: Սա Արքեպիսկոպոսի որդեգրած և արդեն հաստատված պետական մակարդակով ծրագիրն է՝ ոչնչացնել այն ամենը, ինչը հայկական ու քրիստոնեական է: Իսկ այն կեղծ թեզերը, որ հայկական եկեղեցիներն ուղիական են կամ չգիտեն ինչական են՝ կեղծ թեզեր են:

Երբ մենք Դադիվանքում էինք, այն մի քաղցր կտոր էր Արքեպիսկոպոսի համար, մշտապես այցելում էին, լրատվամիջոցների բերում, նկարահանում ու տարածում էին: Բայց երբ մենք այնտեղից ամբողջովին դուրս եկանք, որևէ շարժ ու լուսաբանում Դադիվանքից չի եղել: Սա Նշանակում է, որ Արքեպիսկոպոսն արհեստաժողով ասրթած երևույթներ էր մատուցում հանրությանը՝ առաջ տանելով իր պետական ռազմավարությունը: Մարդ պետք է խուլ ու կոյր լինի, որ այս ամենը չտեսնի ու չսի:

Կրկնում եմ՝ Արքեպիսկոպոսը կկանգնի միայն լուրջ պետական ծրագրի գործարարումից հետո, որին նաև պետք է եկեղեցին ու այլ կառույցներ մասնակցեն: Եթե միջազգային կառույցները և մենք չանցնենք լուրջ քայլերի, մենք Արցախում կկորցնենք այն ամենը, ինչ հայկական ու քրիստոնեական է», – եզրափակեց Արցախի թեմի առաջնորդը:

15 ՄԱՐՏԻ, 2024 Թ.



Հյուրախաղի ճամփան տարավ Բակուրիանի

Փետրվարի 19-26-ը Կապանի մշակույթի կենտրոնի «Չանգեզուր» ժողովրդական պարի համույթը մասնակցեց «Բորժոմի-Բակուրիանի-24» փառատոնին: Այն բավականին ներկայացուցչական էր. մասնակցում էր մոտ 40 պարային խումբ՝ Կրասնոարմևսի տարբեր բաղադրներից, Ռուսաստանի Դաշնությունից: «Չանգեզուր», որը միակ մասնակիցն էր Հայաստանից, հանդիսականին ներկայացրեց Սպենդիարյանի «Էնգելին» և ազգագրական պարերի շարան: Կապանյան պարային համույթը պարզևատրվեց հուշամեդալով, նրա սաները՝ պատվոգրերով: Փառատոնի օրերին «Չանգեզուր» ժողովրդական պարի համույթի սաները ծանոթացան Բակուրիանիի դիտարժան վայրերին:

Երբ հյուրախաղի հրավերներ կային Հունաստանից, Բուլղարիայից, բայց Նախընտրեցին մոտիկ Կրասնոարմևսի, որ ավելի շատ երեխաներ մասնակցեցին միջոցառմանը: Նրանց թիվը՝ 28 էր՝ համույթի ավագ խմբի և կրտսեր առաջին խմբի սաներ: Օտարերկրացի հանդիսականը խանդավառությամբ ընդունեց հայ երեխաների կատարումները:

«Չանգեզուր» համույթի գեղարվեստական ղեկավարն էր, խմբի սաների և նրանց ծնողների անունից երախտագիտություն հայտնեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին՝ փառատոնի մասնակցությունը հովանավորելու և ընդհանրապես արվեստին աջակցելու համար:

Սա խմբի երկրորդ հյուրախաղն էր հանրապետության սահմաններից դուրս:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գործարկել է հարթակ, որում ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգությունը

ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը գործարկել է «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) ակադեմիական հարթակը: Ինչպես «Արմենպրես»-ը տեղեկանում է Գիտությունների ազգային ակադեմիայի տարածած հաղորդագրությունից, այն աշխարհին է ներկայացնում ԼՂ մշակութային ժառանգությունը, հետևում դրա արդի վիճակին, արձագանքում աղբյուրների և վանդալիզմի դեպքերին:

Ինդիվիդուալները ներկայացնում են Արքեպիսկոպոսի բռնադատության քաղաքականությունը և կոնկրետ դեպքերը, գնահատում դրանք միջազգային մշակութապահպան կոնվենցիաների լույսի ներքո», – ասել է գիտական խմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը:

Նա նշել է, որ բացի հարթակից «Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» խմբի և «Մոնումենտ վոլթ» թիմի հետազոտությունները տպագրվել են միջազգային ճանաչում գտած հանդեսներում և ձեռնարկներում (Electrum, Patrimoines,

Gruyter, Brill):

«Մշակութային ժառանգության հետազոտության, ահազանգման և պահպանության ասպարեզում թիմի հետազոտական աշխատանքը հիմնվում է միջազգային կոնվենցիաների, տեսական ու մեթոդաբանական մոտեցումների և պրակտիկաների վրա: Դրանք հայաստանյան իրականության մեջ նորարարական են, հավասարակշռված և անկողմնակալ, ինչն էլ պայմանավորում է արդյունքների օգտագործելիության բարձր մակարդակը: Թիմը համապատասխան տեսական, գործնական և տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում ՀՀ անվտանգության խորհրդին, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ՀՀ Առաքելական եկեղեցուն», – ասել է պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը: Ըստ նրա՝ միջազգային և հայաստանյան մշակութապահպան կառույցները, լրատվամիջոցները հաճախ են օգտագործում «Մոնումենտ

վոլթի» նյութերը որպես չեզոք գիտական արդյունք և իրավիճակների անկողմնակալ փաստագրում:


«Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» նախագիծը. «Հնամալայեր և հուշարձաններ» բաժին.jpg (796 KB)

«Արդյունքները ներկայացվել են Եվրասիայի խորհրդի, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն: Թիմը համագործակցում է ասպարեզի մի շարք կազմակերպությունների և խմբերի՝ Caucasus Heritage Watch-ի, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի, Save Armenian Monuments-ի հետ», – ասաց պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը:

Հարթակի ստեղծմանն աջակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Ֆրոդի հիմնադրամը, Գյուլբենկյան հիմնադրամը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, անհատ հովանավորներ:

13 ՄԱՐՏԻ 2024 Թ.

Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին եկեղեցին



Տվյալների հավաքմամբ և մշակմամբ զբաղվում է ինստիտուտում ստեղծված «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» խումբը և «Մոնումենտ վոլթ» թիմը:

Հարթակի հիմնական նպատակն Արքեպիսկոպոսի անցած ԼՂ անշարժ մշակութային ժառանգության, թանգարանների, մշակութային օջախների քարտեզագրումը և գույքագրումն է՝ վիճակը միևնույն պատերազմը, ընթացիկ վիճակին հետևելը և փոփոխությունների վավերացումը (ավերում, ձևափոխում, վերօգտագործում, քանդակների, պատկերների, արձանագրությունների ջնջում ու փոփոխում, նոր սիմվոլների կիրառում և այլն), և այդ ամենը միջազգային գիտական ու մշակութապահպան հանրությանը ներկայացնելը:

«Հարթակը հատուկ ձևաչափով մշակված գիտական հոդվածների տեսքով ներկայացնում է ԼՂ մշակութային ժառանգությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ հնավայրերը, հուշարձանները, կոթողները, քաղաքացիական կառույցները, թանգարանները, հավաքածուները, առանձին մանրամասները: Ահազանգերի բաժնի

Քաջարանի մշակույթի պալատում մեծարվեցին ընկերության կանայք

Մարտի 8-ից մեկնարկել է կանանց միամսյակը (մինչև ապրիլի 7-ը) և դրա շրջանակում կլինեն իգական սեռին մեծարելուն միտված միջոցառումներ: Քաջարանի մշակույթի պալատի ճեմասրահում մարտի 11-ին Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի 35 և ավելի տարիների աշխատանքային փորձ ունեցող կանայք էին, որոնց նվիրումի և ջանասիրության շնորհիվ ընկերությունը շարունակել է անխափան երթը: Ընթերցվեց 45 կանանց անուն, որոնցից յուրաքանչյուրին «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Ռոման Խուրդլին և գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Չհանյանը շնորհակալագրեր և դրամական պարգևներ հանձնեցին:

Բեմերում հանդես եկած պարուհի Սառա Ստեփանյանը: Երաժշտական կատարումներով հանդես եկան մշակույթի պալատի վարիչ, քանոնահար Նառա Սկրտչյանը, դաշնակահար Գոհար Զովհաննիսյանը, ֆլեյտահար Լիլիթ Գրիգորյանը: Այնուհետև անկեղծ զրույց ծավալվեց աղանդերի սեղանի շուրջ: **ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**



Նորիավորանքի խոսքում Ռ.Խուրդլին ընդգծեց, որ հաճելի մի զգացողությամբ է հանձնում պարգևները կանանց, որոնց մի մասը ծանր ու բարդ աշխատանք է կատարում, տղամարդուն բնորոշ գործառնություններ իրականացնում: Պարգևատրվող կանանց բարեմաղթանքներ հղեց ընկերության վարչական ղեկարտամենտի ղեկավար Չառա Սիանոզյանը: Պարային կատարումով ելույթ ունեցավ մշակույթի պալատի պարուսույց Մելանյա Մարտիրոսյանի սան, եվրոպական տարբեր



Օրվա խորհուրդը հոգևոր երաժշտությունն էր

Փետրվարի 27-ին Քաջարանի մշակույթի պալատի ճեմասրահը յուրահատուկ խորհրդով էր լցված: Մեկնարկեց «Հոգևոր զրույցներ» խորագրով հանդիպումների շարքը: Առաջին հանդիպումը նվիրված էր հոգևոր երաժշտության պատմությանը և խորհրդին:

Միջոցառման հյուրն էր Քաջարանի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Շիրակ քահանա Խանոյանը, ով մեծ պատասխանատվությամբ ներկայացրեց հոգևոր երաժշտության ակունքները: Մտերմիկ զրույցի ընթացքում նա անդրադարձավ առավել նշանավոր ստեղծագործություններին, մանրամասնեց ստեղծման պատմությունը, խորհուրդը և կիրառությունը: Հանդիսատեսը հնարավորություն ունեցավ բոլոր ներկայացված երաժշտական ստեղծագործությունները ունկնդրել կենդանի

ինչըողությամբ՝ մշակույթի պալատի վարիչ քանոնահար Նառա Սկրտչյանի և դաշնակահար Գոհար Զովհաննիսյանի կատարմամբ: Հնչեցին Կոմիտասի «Տեր ողորմես»-ն, «Հայրապետական մաղթանք»-ը, «Քրիստոս ի մեջ»-ը, Գրիգոր Նարեկացու «Հավուն-հավուն»-ը, Մխիթար Այրիվանեցու «Սիրտ իմ սասանի»-ն, Մակար Եկմալյանի «Ամեն հայր սուրբ»-ը: Երեկոն եզրափակվեց Անահիտ Վալեսյանի «Ճախրանք» ստեղծագործության կատարմամբ՝ համեմված կոմիտասյան շնչով: Հանդիպմանը մասնակցում էին նաև «ՉՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Չհանյանը և կայուն զարգացման տնօրեն Արմեն Ստեփանյանը:

ԻՐԻԱ ՅՈՎԻՏՅԱՆ



Այցելեցին Հայրենական մեծ պատերազմի վետերանին

Կանանց միջազգային օրը՝ Մարտի 8-ին, Ռուսաստանի Դաշնության ԱԳ Նախարարության՝ Կապանում գլխավոր հյուպատոսության բացման առաջատար խմբի ղեկավար Սերգեյ Զաչիխինը և «Ռուսական տան» ծրագրերի համակարգող Լյուդմիլա Ադախանյանը Քաջարանում այցելեցին Հայրենական մեծ պատերազմի վետերան Արշալույս Թաղևոսյանին: Նրանք ջերմ բարեմաղթանքներ հղեցին պատերազմի վետերանին՝ Մարտի 8-ի առթիվ՝ հանձնելով նաև Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Ս. Կոպիրկինի շնորհավորական ուղերձը: Ընտանեկան հարկի տակ հավաքվել էին Արշալույս Թաղևոսյանի բազմանդամ և համերաշխ ընտանիքի անդամները: Վետերանի հարազատները ջերմ մթնոլորտում հետաքրքրական դրվագները ներկայացրին սիրելի մոր և տատի հերոսական անցյալից, ինչպես նաև նրա երեխաների ու թոռների դաստիարակությունից: **ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ՎԱԴԱՆՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ԳՅՈՒՊԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՅՄԱՆ ԱՌԱՏԱՏԱՐ ԽՈՒՄԲ**

ԿՈՐԵԼ Է Գործի պետական համալսարանի 2011 թ. շրջանավարտ Ալիետա Վաղիմիրի Խաչատրյանի դիպումը՝ AB 132046, գրանցման համարը՝ 2831: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 2009-2014 թթ. ուստարվա շրջանավարտ Անի Լյովայի Սկրտչյանի դիպումը՝ AB 162802, գրանցման համարը՝ 421: Համարել անվավեր:

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԳՍԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Լյուբերը ներկայացվել է մեքենագիր վիճակում:
«ԳՈՎԱԶԴ» – ԾԱՆՈՒԹՅՈՒՄ բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թեմայի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատուկյաց փող., 70ա շենք
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 20.03.2024թ.: